

ՎԻՓԻԱՐԻ ԼՐԱԳԻՐ.

Ամերիկայի նոր-եօրք քաղաքին մէջ Համաստեղութիւն կամ Աստեղատուն (Constellation) անունով լրագիր մը կիրատարակուի, որոյ երկայնութիւնը ուժ ոտնաչափէն աւելի է, եւ լայնութիւնը ճինգ. ըսել է որ գրեթէ ամբողջ քա-

ռակուսի ձողաչափ (սաժեն) մը տեղ կըռնէ: Եթէ մեր ազգային լրագիրներէն ամենուն ալ մէկ մէկ թերթը բովէ բով գրուին, կարծեմ թէ ճազիւ այս մեծութիւնը կունենան:

ԱՃԱՆ ԾԱԽՈՒԱԾ ԹԱՆԿ ԶԻ.

Այս օրերս Փարիզ ձի մը ծախուեր է 15 ֆրանքի (3 բուլլի 75 քոփ.): Այս ձին Անգղիոյ ձիերուն ազնիւ մէկ ցեղէն է եղեր, որ ի՞նչ ձիարշաւներու մէջ որ մտեր է՝ ամէն անգամ յաղթանակն առեր, ու տիրոջը 1,860,000 ֆրանք շահ բերեր է: Բայց այժմ այն խեղճը յոգնած ու ծերացած լինելով, եւ տիրոջը բանի չգալով, անգուժ տէ-

րը գոհ չլինիր այն քաջ ու ազնիւ ձիուն ձեռքով շահած 1,860,000 ֆրանքովը, վրան կուզէ աւելցընել նաեւ 15 ֆրանք:

Թէ որ խեղճ կենդանիք լեզու ունենային, ի՞նչ իրաւացի գանգատներ ունէին ընելիք մարդուս ապերախտութեանը դէմ:

ՀԱՆԵԼՈՒԿ.

*Մարդու աչքի երեւնալէն կըփախչիմ ես անգաղար.
Խաւարասէր անունն ինձի է վայելուչ ու յարմար:
Երբեմն զիս փընտուղները շուքի նըման կրտեսնեն,
Բայց շատ անգամ թանձրը քողով զիս ծածկըւած կըզըտնեն.
Ով որ չափէն ալ աւելի զիս գըտնելու աշխատի,
Նա զարմանք չէ որ տագնապի եւ բարկանայ, սըրգողի:
Իսկ դուն որ այդքան կաշխատիս որ իմ անունս իմանաս,
Ով բարեկամ, շիտակն ըսեմ, պէտք է խըղճաս իմ վըրաս.
Գիտես ինչո՞ւ կըպահուըտիմ ես միշտ այսպէս ծակէ ծակ,
Անոր համար որ թէ գըտուիմ՝ իսկոյն լինիմ խայտառակ:*

Նախընթաց թերթին հանելուկն է ՍԲԻՆՔ:

Տարւոյս Օրացուցին մէջ գրուած Սեպտեմբերի առաջին հանելուկն է ԱՆՁՐԵՒ, — Երկրորդը ԿՈՂՄՆԱՅՈՅՑ (Վիռսուլա). — Երրորդը ՍԱՆՏԻ:

